

Ներսէս մեծի կաթուղիկոսութիւնը 364-ից առաջ չպէտք է դնել, դորա համար աւելի զօրեղ ապացոյց է այն հանգամանքը, որ ըստ Փաւստոսի և այլոց ո. Ներսէս ձեռնադրուել է Կեսարիոյ Եւսեբիոս եպիսկոպոսից. իսկ Եւսեբիոս եպիսկոպոսական աթոռ է բարձրացել 362 թ.-ին, Կարեոր էր նաև յիշել Զոնարին, որին ըստ Փաւստոսի Երշակ թագաւորը հակաթոռ էր կարգել ո. Ներսէսի կենդանութեամբ և Յուսիկ Բ.-ին, որ նորա մահից անմիջապէս յետոյ կարգուեցաւ և որի ձեռնադրութեամբ Կեսարիա գնալու սովորութիւնը վերացաւ: Այդպէս և յաջորդ հայրապետների շարքը պէտք է դնել Զաւէն, Շահակ, Եսպարակէս, ինչպէս Փաւստոս է դրնում, որ այս ժամանակի համար անհասկած միակ վստահելի պատմագիրն է և որ տուել է մինչև իսկ երեք կաթուղիկոսների իշխանութեան տարիները (Յուսիկ 4, Զաւէն 3, Շահակ 2). և որովհետև ո. Ներսէսի մահուան հաստատուն թիւը պէտք է համարել յերաւի 373 թ.-ը, ինչպէս և ընդունել է Հեղինակը, ուստի յաջորդ կաթուղիկոսների ժամանակագրութիւնը կլինէր Յուսիկ 373—377. Զաւէն 377—380. Շահակ 380—382: Իսկ ո. Սահակ Պարթև չի կարող 390 թ.-ից առաջ կաթուղիկոսական աթոռ բարձրացած լինել, եթէ ստոյգ է, որ նա Խոսրով թագաւորի օրով է իշխանութեան հասել, որովհետև Խոսրով թագաւորից Հայաստանը Յունաց և Պարսից մէջ բաժանելուց յետոյ, և այդ բաժանումը տեղի է ունեցել (ըստ Նէօլդէ-քէի) 390 թ.-ին:

Հատերը մեր դարն ամենահարուստն ու ամենանշանաւորն են համարում մարդկային ազգի ամբողջ պատմութեան մէջ, սակայն յերաւի դժուար կլինէր անցեալից մի ուրիշ ժամանակաշրջան ցոյց առնել, որ աւելի բազմաթիւման լինէր ու աւելի բազմաթիւման զիտութեան ու արուեստի, պետական, հասարակական և անհատական կեանքի մէջ մասն մեծամեծ փոփոխութիւններով. այդ բոլորը մի հայեացքով չափել անհնարին է, կարելի է միայն մի որոշ տեսակէտ ընդունել և բազմաթիւ կողմերից մէկը միայն զիտողութեան առնել, Այստեղ մեզ հետաքրքրում է այն հարցը, թէ ինչ է ըսել այդ դարը եկեղեցւոյ համար: Պրոֆ. Զոսմ իւր համարում եկեղեցական պատմութեան մէջ ասում է. * Յեղափոխութեան (Ֆրանսիական) փոթորիկի մէջ ծնաւ ժ. դարը: Ամբողջ աշխարհը կազմալուծուել էր՝ ոչ միայն արտաքին, այլ նաև ներքին, հոգեկան աշխարհը: Լուսաւորութիւնը եկել ու երկինքը վերացրել էր մէջտեղից՝ ոչ միայն տեսանելին, որը ընտանի զիտութեան գիւտերի շնորհիւ փոխուել, լոկ միայն աչք խորոզ երևոյթ էր դարձել, այլ որ աւելի մեծ նշանակութիւն ունէր՝ անտեսանելի երկինքը իւր վոեմ և մեթոթարիշ բնաւորութեամբ, որ ձգել էր քրիստոնէական հաւատը ներկայ կեանքի աշխարհի վերայ... ժ. դարը մի հարցի հետ ծնաւ. կարո՞ղ ես արդեօք վերականգնել այն, ինչ որ աւերուած է, կարո՞ղ ես ի խորոց ցնցուած հասարակութեան վերստին ամուր հիմք տալ՝ կարո՞ղ ես վերադարձնել նորան աշխարհ փրկող և աշխարհ պահպանող հաւատը՝ քրիստոնէական հաւատը:

Արդ, ինչ է ասում անցնող դարի պատմութիւնը, կարողացել է նա վերադարձնել մարդկութեան կոյրած հաւատը: Դժուար է ասել, բայց զոնէ այնչափը հաւատալի է, որ բոլորովին ուրեւ ըստ է կատարուել, ցան ժ. դարի մարդաբանները դուշակում էին: Եւրոպայում քրիստոնէութիւն կամ եկեղեցի ասելով սովորաբար կաթոլիկ եկեղեցին են հասկանում, որովհետև ազգերի քաղաքականութեան մէջ իրական գեր կատարողը նա է. ամէնից առաջ ուրեմն այդ եկեղեցւոյ վերայ կարելի է ժամանակի ազդեցութիւնը դիտել, և այստեղ եղբայրացութիւնն ամէնից աւելի աչքի ընկնող է ու զարմանալի: Հարեա՞տարի առաջ ում մարքի կարող էր անցնել, թէ՞ նապոլէոնի ձեռքին խողովիք դարձած պապ կան իշխանութիւնը, իրաւունքներից ու գոյքի զրկուած պապական եկեղեցին այն ահապէն դ

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՅՅԻՆԵՐ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Տարին անցնում է և նորա հետ մի ամբողջ դար է գլորում: Անցեալի խրատական նշանակութիւնը մեր կեանքի համար, և առաւել մարդարեւական ընտելութիւնն ապագայի համար՝ ստիպում են մասժող մարդուն այսպիսի դէպքերում մի ակնարկ ձգել դէպի յետ, ժամանակի պոյմանական տահմանների մէջ մի ներքին խորհուրդ որոնել: Ինչ է ըսել իւր հետ ժ. դարը, — հաղարարութեթեր ու անթիւ գրքեր գնում են այսօր այդ հարցը, և անշուշտ ոչ մէկն առանձին, և ոչ իսկ բոլորը միասին բաւարար պատասխան չեն տալիս: Բէպէտ չափազանցած է ու հաւանականօրէն սխալ այն կարծեքը, որով

* Kirchengeschichte im Grundriss, Von R. Schöpfung Prof. der Rechtswissenschaft in Leipzig, achte Auflage 1893 S. 181.

բութիւնն ու ազդեցութիւնը ձեռք կը բերեն կրկին, որ այսօր ներկայացնում են: Յիւրաքանչեւ կաթողիկոսութիւնը զուտ քրիստոնէական հաւատի վերականգնանքի շնորհիւ չէ ձեռք բերել այդ զօրութիւնը: Բայց բոլորովին սխալ է կարծել, թէ արքային միջոցները որեւէ նշանակութիւն կունենային, եթէ ներքին հոգեւոր ոյժեր չգործակէին: Անշուշտ մարդոց նախապաշարմունքից և այլ թուրութիւններից ձարպիկութեամբ օգուտ քաղելով չէ միայն, որ կաթողիկէ հոգեւորականութիւնն այնպիսի մեծ իշխանութիւն ունի հոգիների վերայ: Եկեղեցւոյ ոյժը նորա իսկապէս բարեպաշտ, Քրիստոսի հոգւով լի և անձնուէք պաշտօնեաներն են կազմում միշտ, որոնք շատ անգամ գուցէ անյայտութեան մէջ են մտնում: Իսկ նարպիկները նոցա շնորհիւ հաստատուած հեղինակութիւնը գործ են դնում անձնական նպատակների և աշխարհային շահերի համար: մինչև որ զիման տունուի նոցա երեսից: Եթէ այս վերջինները չլինէին, չլինէր օր. Յիսուսեան կարգը գուցէ շատ բան կպահանջէր կաթողիկէ եկեղեցւոյ արտաքին փայլից ու քաղաքական զօրութիւնից, բայց անկասկած աւելի կլինէր նորա ներքին պայծառութիւնն ու հոգեւոր զօրութիւնը: Եյս նկատմամբ մի արտաքին կարգի երևոյթ տեղի ունեցաւ մեր դարում: Պիոս Թ. պապը մի ընդհանուր ժողով գումարեց Վատիկանում և 1870 թ. յուլիս 18-ին արձակած կոնգալով «անսխալական» հռչակել տուաւ իրեն: Իսկ երկու ամիս յետոյ Վիտոր Էմմանուէլի զօրքերը Հռոմ մտան: Յաւիտենական քաղաքը Իտալիոյ մայրաքաղաքը դարձրին և պապին զրկեցին իրպառ աշխարհական իշխանութիւնից: Այսպիսով Հռոմէական եկեղեցւոյ քահանայապետները՝ դարերի ընթացքում երկուսուր իրենց ձեռքում պահելու համար ամենայամուռ և ամենատանական կռիւր մղելուց յետոյ, որ երբևիցէ եղել է, ստիպուած էին ձեռքից վայր դնել մէկը նոյն այն ժամանակ, երբ միւսը կատարեալ յաղթանակ էր տարել: Այս նշանաւոր զուգակի պոթիւնը մի մեծ խրատ է պարունակում. եկեղեցին անպարտելի է, բոնի նա իւր հոգեւոր սուրբ գործածել զիտէ, ընդհակառակն անխուսափելի է նորա պարտութիւնը, որչափ և ժամանակաւոր շացուցել յաջողութիւն ունենայ: Եթէ իւր հոգեւոր բնութեան հակառակ աշխարհականի վերայ իւր յոյսը դնէ: Նորա ապագայ յաջողութեան պայմանը մի որոշ չափով այն պէտք է համարել, թէ արդեօք օգուտ կբաղէ այդ խրատից: Իսկ ընդհանրապէս քրիստոնէութեան ներկայ վիճակը հասկանալու համար, հարկաւոր է, որ անց խաբուելու արտաքին երևոյթները՝ առանձին ուշադրութեամբ քննելով, որչափ աւելացել կամ պակասել են նորա հոգեւոր ուժերը:

Առում են լուսաւորութեան շրջանում եւրոպացիները կորցրին իրենց հաւատը: Բայց պայմանական մաքով պէտք է հասկանալ այդ: Քրիստոնէական հաւատն այնպիսի բան չէ, որ կորցնել կարելի լինի. շատ անգամ մենք արտաքին բարեպաշտական ցոյցերն իսկական հաւատի տեղ ենք ընդունում, և երբ սոքա պակասում են, կարծում ենք թէ հաւատը վերացաւ: Իրօք շատ դժուար է մի ժամանակ միտի հետ համեմատելով, որոշել թէ երբ քրիստոնէութիւնն աւելի զօրեղ է եղել, մի գէպքում նորա ներկայացուցչներն աւելի քիչ են: Բայց աւելի մաքուր և հաստատուն՝ միւս գէպքում աւելի բաղմամբիւ, բայց շփոթ և թույլ համոզումներով: Եւրոպան մի անգամից լուսաւորուեց, այն դադարիւրները, որոնք անցեալ դարում բարձր և միջին դասակարգի սեփականութիւն էին միայն, այժմ ստորին դասակարգի մէջ են մտել, և ինչպէս այն ժամանակ նոքա էին կարծում, թէ բնութեան մասին մի քանի տեղեկութիւններ ստանալով կեանքի բոլոր գաղափարները դառն են և բոլոր կրօնները հերքել, այնպէս և այժմ վերջինս: Սակայն ինչպէս այն ժամանակ շատ շուտով ուշքի եկան և լուսաւորութեան շրջանը տեղի տուաւ ըրմանալեականութեան, երբ խաւար միջին դարերը նորից սղեւորութեան աղբիւր դարձան բանաստեղծների և նոցա բերթութեամբները կարգացողների համար: այնպէս և այժմ անխուսափելի է, որ ներկայ սերունդը շուտով ձանձրանայ ամէն տեղ «աւալական» որոնելուց և գաղափարականի կարօտ զգայ: Գորա նշաններն արդէն երևում են ամէն կողմ, և ուր պէտք է յագուրդ գտնէ գաղափարի այդ մեծ ծարաւը, եթէ ոչ վտեմագոյն յաւիտենական գաղափարների ամփոփումն եզոդ աւետարանի մէջ: Ճշմարիտ է, արդի եւրոպական կեանքը երեսանց դիտողին այնպէս է թուում, թէ շատ քիչ քրիստոնէութիւն է մնացել նորա մէջ և իրաւունք ունին նոքա, որոնք լրջօրէն հարց են դնում. արդեօք կարելի է դեռ այժմեան քաղաքակիրթ ազգերին քրիստոնէայ անուանել: Սակայն ինչպէս նկատեցինք, եթէ մի քիչ խոր նայենք, անցեալն ու ներկան համեմատենք, կրտեսենք, որ նա ընդհակառակն շատ մեծ յաւաքագրմութիւն է արել մեր դարում և աւելի մեծը խոստանում է ապագայի համար: Միայն կաթողիկէ եկեղեցւոյ արտաքին փառքի մէջ չէ նկատուում այդ յաւաքագրմութիւնը կամ այն մասնաւոր ուշադրութեան արժանի հանգամանքի մէջ, որ քրիստոնէական առաքելութիւնը այնպիսի ընդարձակ ծաւալ է ստացել և չնայած իւր թերութիւններին ու անյաջողութիւններին, այնուամենայնիւ նշանաւոր

գործ է կատարում հեթանոսների աշխարհում. այլ առաւել այն ներքին շարժման մէջ, որից անմասն չի մնացել զբեթ է ոչ մի եկեղեցական համայնք: Զօրեղ ընդհարումը ժամանակակից քաղաքակրթութեան հետ ստիպել է բոլորին ըննական աչքով նայել իրենց վերայ, կամայ ակամայ բարեփոխութիւններ մտցնել իրենց կաղամկերպութեան մէջ, ուղղել թերութիւններն ուր կարելի է, հոգ տանել պաշտօնեաների կրթութեան մասին, փոխառնել հակառակորդից գիտութեան ղէնքը սեփական սկզբունքները պաշտպանելու համար, և արդիւնքն այն է, որ եթէ հաւատացող քրիստոնեաների թիւը քիչ էլ լինի քաղաքակրթութեան աշխարհում՝ նոցա հաւատը գիտակցական է և հաստատուն, իսկ այդ շատ բան է նշանակում ապագայի նկատմամբ: Ներկայումս դաւանութեամբ միմեանցից բաժանուած եկեղեցիներին համար ներքին հաշիւները չեն դիտար խնդիր, այլ այն, թէ ինչպէ՞ս պէտք է պահեն քրիստոնէութեան հեղինակութիւնը լուսաւորուած մարդկութեան առաջ: Անցեալ դարում ենթադրում էին, թէ միայն լուսաւորութեան առաջը փակելով կարելի է այդ մեր դարն ապացուցեց, որ դարան ամենեւին կարելի չկայ, այլ պէտք է մի կողմից գիտութեան և հաւատոյ, միւս կողմից՝ եկեղեցւոյ մէջ, պատահականի և յաւիտենականի տահմանները որոշ դնել, որպէս զի դուռ քրիստոնէական ճշմարտութիւնները երեւան դան և իրենց յատուկ պայծառութեամբ գրաւեն կրկին զէպի լոյս ձգող մարդոց սրտերը: Այդ պահանջը զեռ այժմ շատ տեղ ինչպէս հարկն է չի զգացուում, բայց անհրաժեշտաբար կզգացուի հետզհետէ ապագային, և որչափ շուտ բաւականութիւն տրուի նորան, որչափ շուտ միացնեն դանոսան եկեղեցիներ իրենց ոյժերը ընդհանուր գաղափար պաշտպանելու համար՝ այնչափ աւելի մօտ է ու հաւատարի քրիստոնէութեան յաղթանակը:

Զօհմ, իւր վերեւ յիշուած գրքի մէջ, նմանեցնում է ժամանակակից հասարակութիւնը մեր հողագնաին, որի ներքոյ լիքը կրակ է, զբսից մի բարակ շերտով պատած. ամէն բոլոր կրակը դուրս ժայթքել և ահաղին աւերումներ գործել կարող է: Սակայն յայտնի է, որ հողագնաին կեղեք հրային միջոցի համեմատութեամբ շատ բարակ լինելով՝ հանգեւո՞ւնք՝ այնչափ ոյժ ունի, որ գիմանալ կարող է, և եթէ ներքից ժամանակ առ ժամանակ ժայթքումներ տեղի են ունենում՝ ելումը խառնուում է շուտով գրոյի նիւթի հետ, ենթադրուում նորա օրէնքներին և նոր աւելի փաթեմ կենար դարդացնելու պատճառ լինում: Այդպէս է նաև հասարակութիւնը, դարերի ընթացքում նորա մշակած կարգերն ու պատած գաղափար-

ները մի անգամից հեշտութեամբ զոհ գնալ չեն կարող ներքին խրտումների, և այն զօրեղ կոիււր, որ կայ այժմ այդ կարգերը պաշտպանողներ և նոցա գէ՛մ բողոքողների մէջ՝ նորանով չի վերջանալ անշուշտ, որ բողոքողները յաղթեն և ամէն ինչ ոտքի տակ տան, այլ որ նոքա իրենց օրինաւոր պահանջների բաւականութիւնը գտնեն և մի որոշ մաս միւսների վայելած բարեքներին: Քրիստոնէութեան դերն այս գէպքում պահպանողական չէ միայն, այլ նաև վերանորոգչական. նա կուտած է աւերումների առաջն առնելով՝ միանգամայն մաքաւող ուժերին ուղղութիւն տալ և աշխատել որ հասարակաց բարեքը յառաջ բերեն: Թէ՛ նա կարող է այդպիսի դեր կատարել և պէտք է կատարէ՝ ապացոյց է այն պարզ հանգամանքը, որ արդէն ամբողջ աշխարհի համար գաղափարական բարոյականութիւնը քրիստոնէականն է, և թէպէտ շատերը գնահատում են այդ բարոյականութիւնը առանց գիտակցելու կամ ընդունելու, թէ քրիստոնէական հաւատից է բղխում. բայց այդ մի ժամանակաւոր նախապաշարում է, որ կլինի նոր կարելի կլինի հաւատոյ վսեմութիւնը նոյն պարզութեամբ ներկայացնել ապագայ սերունդներին, ինչպէս անցեալների համար պարզ է եղել բարոյականի վսեմութիւնը: Եւ երբ այդ կլինի, այն ժամանակ քրիստոնէութեան բարոյական սկզբունքները լոկ ճանաչողութիւն չեն մնայ, այլ կենանք մէջ կմանեն և կենանք կգառնան. այն ժամանակ եկեղեցւոյ և լուսաւորեալ հասարակութեան մէջ եղած այժմեան խորթութիւնը կվերանայ և ազատ ասպարէզ կբացուի ընդհանուր փրկութեան համար աշխատելու:— Ինչպէս մի դար առաջ ոչ որ չէր կարող դուշակել, թէ եկեղեցին այն կլինի այժմ, ինչ որ է, այնպէս և այժմ գծուար է գուշակել, թէ ինչ կլինի նա մի դար յետոյ: Նա գուցէ այժմեան ունեցածից շատ բան կկարցնէ, բայց որ նորա իսկական վստտակը, Աստուծոյ արքայութեան համար ձեռք բերած վստտակը, մեծ կլինի այնուամենայնիւ՝ անկասկած է ամէն հաւատացողի և պատմութեան մէջ նախախնամութեան վարել, աջը տեսնողի համար:

ՕՐԹՈՂՈՔՍ ԵՎԵԼԵՑԻ.

Նոյեմբեր 7-ին շատ մեծ հանդիսով տօնուեցաւ Պիեյում Սրբ. Բոաննիկի մետրապոլիտի քահանայութեան 50-ամեայ յորելանքը, որ ս. Սինոդի նախագահող անգամ լինելով՝ ամենաբարձր պաշտօնեան է այժմ Ռուսաց եկեղեցւոյ Սրբ. Բոաննիկի միենոյն ժամանակ իւր մարտիր և արգիւնաւոր անցեալով (նա սկսել է իւր գործունէութիւնն իւրեւ գաթախօս Պիեյի Հոգևոր ճեմա-